(19) **ԱՄ**

(51) **ՄԱԴ (2021⊠01)**
A61C 13/00

Հայաստանի Հանրապետության
մտավոր սեփականության գործակալություն

ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ (11) 603 U

(21) Հայտի համարը **AM20200087U**
(22) Հայտի Ներկայացման թվականը **01.10.2020**
(45) Հրապարակման ամսաթիվը **08.01.2021**
(56) **ՀՀ 3274, A61C 13/00, 2019**
(72) Գյուտի հեղինակը, երկրի կոդը **Տիգրան Կարապետյան (AM)**

(71) Հայտատուն, երկրի կոդը **Տիգրան Կարապետյան (AM)**
(73) Արտոնագրատեր, հասցեն, երկրի կոդը **Տիգրան Կարապետյան (AM)**

(54) Ատամնապրոթեզ

(57) Օգտակար մոդելը վերաբերում է օրթոպեդիկ ստոմատոլոգիային, մասնավորապես՝ ատամնապրոթեզներին: Ատամնապրոթեզն ունի ատամնաբուժական ակրիլային պլաստմասսայից պատրաստված հիմք և ատամնաշար: Հիմքը լրացուցիչ ունի արտաքին մակերևույթի վրա կատարված փորվածք և դրա մեջ ամրակցված արծաթե ներդիր: Արծաթե ներդիրը կատարված է շրջանի, եռանկյան, քառակուսու, ուղղանկյան, շեղանկյան, սեղանի կամ օվալի եռաչափ պատկերի տեսքով: Արծաթե ներդիրը փորվածքի մեջ ամրակցվում է ներդիրի ստորին մակերևույթի եզրագծով կատարված ելուստի միջոցով: Իրականացման այլ տարբերակում արծաթե ներդիրը փորվածքի մեջ ամրակցվում է ներդիրի ստորին մակերևույթի եզրագծով կատարված և ազատ ծայրամասով ներդիրի եզրագծից դեպի դուրս ուղղված ելուստի միջոցով: Արծաթե ներդիրի դիմերեսը կատարված է ակոսավոր: Արծաթե ներդիրի դիմերեսի ակոսներն իրականացված են խորհրդանիշի, պատկերի կամ ծածկագրի տեսքով: Ապահովվում է ատամնապրոթեզի վարակազերծիչ հատկությունը, երկարաժամկետ օգտագործումը, ինչպես նաև ատամնապրոթեզի տեսականու ընդլայնումը:

Նկ. 1